

տուի գիտութիւն, այլ անձնահաճ կամք»
(անդ, 24):

Բ. Շատ դիւրին է մեկնել մեր մենաստանաց այդ աղաւաղման պատճառը: Յայտնի է՝ որ Հայաստանի վանքերն հին ժամանակ միանգամայն հիւրանոցներ էին¹, նման արեւմտեայց. եւ ունէին ընդարձակ կալուածներ՝ բաւելու համար իրենց եւ օտարաց սննդեան, եւ զորս կը մատակարարէին վանականք իսկ, այնքան անձնատուր լինելով անոնց, որ Եղիշէ կը վկայէ՝ թէ «Գրեթէ զամենեւեան տեսանեմ թաւալեալ յերկրաւոր ստացուածս... որ լի են անառակ ազահուլթեամբ». այս ինքն դիզելու ջանքով (217): Կ'աւանդուի՝ որ Լուսաւորչի օրերէն մենաստանաց ապրուստին համար սահմանած էին «անդս» (Սահ. 109): Իբր օրինակ յիշենք Գլակայ վանքը, որ ունէր «գիւղս եւ աւանս մեծամեծս» (Զեն. 11): Ստէպ ստէպ բարեպաշտ ազնուականք ալ կ'աճեցնէին անոնց հարստութիւնը: Դաւիթ կամսարական Գտկոյ վանուց եկամուտ կը կտակէ «հարիւր կայթ հաց եւ հազար փաս գինի» (Հյպտ. 192): Վահրամ պահլաւունի

1. Հմմտ. ՅՏԽ. 214. Խոր. 206. Հյպտ. 397. ՅՏ. ԿԹԴ. 116. Ասող. 174. եւն: